ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանի 091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտության 2019-2020 ուս. տարվա անընդհատ և ինտեգրացված ու մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման մասին

Ավանդական բժշկության համալսարանի ռեկտորի 04.05.2020թ-ի թիվ 401 հրամանով ես նշանակվել եմ Ավանդական բժշկության համալսարանի 2019-2020 ուստարվա 091101.00.7- «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված ու մագիստրատուրայի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Ռեկտորի հրամանով կազմվել են ատեստավորման հանձնաժողովներն ու ենթահանձնաժողովները: Ենթահանձնաժողովներում, բացի համալսարանի ամբիոնների դասախոսական կազմից ընդգրկվել են նաև հանրապետությունում ճանաչված այլ բժիշկ-ստոմատոլոգներ:

- Նախագահի տեղակալ՝ բ.գ.թ., Հ.Հակոբյան, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
- Հանձնաժողովի անդամ՝ Ա. Կարապետյան, ֆակուլտետի դեկան
- Քարտուղար՝ ուսումնական մասի վարիչ՝ Ա. Սարգսյան
- Տեխնիկական պատասխանատու՝ մանկ.գ.թ., դոցենտ, ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր
- Առարկայական ենթահանձնաժողովների կազմում ընդգրկել՝
- Ենթահանձնաժողովի անդամներ՝

ա/ «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»

5. Գ. Մանաշյան՝ քննող դասախոս
6. Լ. Բարսեղյան՝ քննող դասախոս
7. Ա. Զեյնալյան՝ քննող դասախոս
8. Ն.Բրսիկյան՝ բ.գ.թ., Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Թերապևտիկ ստոմատոլոգիա» ամբիոնի դասախոս

բ/ «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»

1. Գ.Գրիգորյան՝ քննող դասախոս
2. Պ. Ադամ՝ քննող դասախոս
3. Ա. Զեյնալյան՝ քննող դասախոս

4. Է. Հակոբյան՝ «Հակոբյանս» բժշկական կենտրոնի տրօրեն,
«Աստղիկ» ԲԿ-ի դիմածնոտային վիրաբույժ

գ/«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»

1. Վ. Կարապետյան՝ քննող դասախոս
2. Դ. Դավթյան՝ քննող դասախոս
3. Ա. Դանիելյան՝ քննող դասախոս
4. Հ. Գասպարյան՝ բ.գ.թ., Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի» ամբիոնի դոցենտ

Ռեկտորի հրամանով ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել և անցկացվել էր հունիսի 5-ից մինչև 19-ը, հետևյալ գրաֆիկով՝

- «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա» – 503 խումբ՝ 05.06.2020թ., 502 խումբ՝ 08.06.2020թ., մագիստրատուրա՝ 08.06.2020թ.,
- «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա» – 503 խումբ՝ 11.06.2020թ.502 խումբ՝ 15.06.2020թ., մագիստրատուրա՝ 15.06.2020թ.,
- «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա» -503 խումբ՝ 17.06.2020թ., 502 խումբ՝ 19.06.2020թ., մագիստրատուրա՝ 19.06.2020թ.:

Ամբիոնների կողմից վերանայվել են «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա» և «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա» առարկաների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորումների կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ավարտական քննական առարկաներից ամբիոնի վարիչի բնութագիր՝ յուրաքանչյուր ուսանողի մասին,
- ✓ ուսանողի տարեկան գնահատականը տվյալ առարկայից,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Երկրում արտակարգ դրության պատճառով ամփոփիչ ատեստավորումը կատարվել է հեռավար՝ ZOOM հարթակով համաձայն համալսարանի կողմից հաստատված «Հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ»-ի: Ելնելով հեռավար ուսուցման առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր առարկայի ատեստավորումը անցկացվել է մեկ փուլով, բանավոր՝ ընդգրկելով տեսական գիտելիքները և գործնական հմտությունները (տոմսը պարունակում էր 2 հարց և 1 իրավիճակային խնդիր):

Ուսանողին տրվել էր առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար):

Յուրաքանչյուր քննության համար կազմվել և հաստատվել էր ուսանողների մուտքի ժամանակացույց: Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողը բանավոր ընտրում էր տոմսը, որից հետո այն տեղադրվում էր էկրանին: Ելնելով քննության ձևաչափից՝ սահմանափակ էր գործնական հմտությունների ցուցադրումը, սակայն այդ պակասը լրացվում էր իրավիճակային խնդիրների վերլուծությամբ և տեսական հարցը ներկայացնելիս: Ուսանողների տեսական գիտելիքները բավարարում էին մասնագիտական որակական պահանջներին:

Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ արդյունքները գոհացուցիչ էին: Ես այն կարծիքին եմ, որ համալսարանում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ բժիշկ-ստոմատոլոգներ պատրաստելու համար:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

502 խումբ՝

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»	6	3	3	-	-	-
2.	«Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»	6	3	3	-	-	-
3.	«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»	6	2	4	-	-	-

503 խումբ՝

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»	14	1	5	8	-	-
2.	«Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»	14	-	3	11	-	-
3.	«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»	14	-	4	10	-	-

Մագիստրատուրա՝

N	Առարկա	Ուսանող. թիվ	Գերա-զանց	Լավ	Բավար.	Անբավ.	Չի ներկայացել
1.	«Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա»	9	4	1	4	-	-
2.	«Վիրաբուժական ստոմատոլոգիա և մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա»	9	4	1	4	-	-
3.	«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա»	9	4	2	3	-	-

Բարձր գիտելիքներով օժտված օտարերկրյա ուսանողներից Դեբար Նաջդաթ Ֆատիհ Ալ Բարզնջին, Սառա Աբդուլվահհաբ Ալի Ալ Զամմուռը, մագիստրոսներից Հայկ Կուլիջանյանը, Օֆելյա Նազարյանը, Լիանա Բայբուրդցյանը:

Ամփոփելով ամփոփիչ ատեստավորումներ, պետք է արձանագրեմ, որ մագիստրոսների կլինիկական մտածելակերպը շատ ճկուն էր: Իհարկե դա հմուտ դասախոսական կազմի և համալսարանի ընձեռած ժամանակակից սարքավորումներով տեխնիկական լաբորատորիայի, ֆանտոմներով հագեցած աշխատանոցների, լսարանների և համալսարանական և վարձակալած առաջնակարգ կլինիկաների պայմանների շնորհիվ է:

Առաջարկում եմ հետագայում իրավիճակային խդիրները կազմելիս ուշադրություն դարձնել նաև հիվանդությունների կանխարգելման հարցերին, ախտորոշմանը, հետազոտման բոլոր պարակլինիկական եղանակներին: Կցանկանայի տոմսերում և իրավիճակային խնդիրներում շատ ներառված լինեին օրթոդոնտիան՝ նկատի ունենալով նրա ժամանակակից դերը ստոմատոլոգիայում:

Ավանդական բժշկության համալսարանի շրջանավարտները բուհում ստանում են լիարժեք տեսական և գործնական գիտելիքներ, տիրապետում են գործնական հմտություններին:

ԱՄՓՈՓԻՉ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
Բ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ՝ Մ. Հարությունյան